ԵՄ «Երևան. արևային համայնք» ծրագիր - շենքերի ընտրության չափորոշիչներ

- 9-14 հարկանի, երկու և ավելի մուտքերով, առնվազն 2 աշխատող վերելակներով պանելային շենք:
- Հարթ տանիքով, տանիքը վերանորոգված կամ վերանորոգման կարիք չունեցող, շենքի կառուցապատումից հետո նոր հարկերի ավելացման բացակայություն:
- 3-րդ և 4-րդ կարգի վթարայնության աստիճանի բացակայություն և տանիքին ՖՎ կայանի հավելյալ քաշը կրելու վերաբերյալ եզրակացություն (տրվելու է համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության կողմից):
- Շենքի բակային տարածքների առկայություն:
- Շենքի նվազագույնը 85% բնակեցվածություն:
- Արդյունավետ գործող շենքը կառավարող մարմնի առկայություն, կառավարող մարմնի և սեփականատերերի համաձայնությունն ու պատրաստակամությունը՝ մասնակցելու տվյալ ծրագրին:
- Շենքի աշխարհագրական դիրքը, ՖՎ վահանակները ստվերող ենթակառուցվածքների բացակայություն:
- ՖՎ համակարգի յուրաքանչյուր 1 կՎտ հզորության համար առնվազն 10քմ տարածքի առկայություն:
- Տանիքում շին-մոնտաժային աշխատանքների անվտանգ իրականացման հասանելիություն:
- Տեղադրվելիք ՖՎ կայանի անվտանգության ապահովման հնարավորություն:
- Շենքի հարևանությամբ ՖՎ վահանակների տեխնիկական անվտանգությունը խաթարող վտանգավոր նյութեր արտանետող արտադրամասերի բացակայություն:
- Տանիքում՝ ՖՎ վահանակներին մոտ գտնվող հատվածում, ծխատար և այլ ջերմային աղբյուրների բացակայություն:
- Շրջակայքում՝ մասնավորապես շենքի հարավային կողմում, հեռանկարային 20 տարվա ընթացքում, ավելի բարձր շինություն կառուցելու հավանականության բացառում:
- Շենքում սոցիալապես անապահով ընտանիքների առկայություն՝ ընտանիքների անապահովության գնահատման «ՓԱՐՈՍ» համակարգում հաշվառված կամ որևէ այլ սոցիալական աջակցության ծրագրերից օգտվողների, ինչպես նաև զոհված ազատամարտիկների և (կամ) հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքների և այլ խոցելի խմբերի առկայություն: